

# Ժողովուրդ

160  
(2640)

9 նոյեմբերի չորեքշաբթի 2022  
տպագրության ժԱ տարի

✉ ք. Երևան, Արմավյան 22ա/3 (0010)

☎ + 374 10 546423

@ info.armlur@gmail.com, info.zhoghovurd@gmail.com

100 դրամ

## «ՆԱԿԹԵԼՈՒ ԵՆՔ». ՊԵՐՃԱՆՔՆ ՈՒ ԹՇՎԱՌՈՒԹՅՈՒՆԸ



2020թ.-ի նոյեմբերի 9-ի եռակողմ հայտարարությունից հետո՝ երկու տարի անց, պատերազմը, ցավոք, չի ավարտվել: Ապացույցը հակառակորդի կողմից անընդ-հատ հրահրվող սադրանքները, ռազմական գործողություններն ու վերջին՝ սեպտեմբերի 13-ի մեկօրյա պատերազմն էր:

Նոյեմբերի 9-ը հայ ժողովրդի պատմության մեջ միանշանակ որպես սեփ, սգի ու կորստի օր է մնալու եւ խաբկանքի ու հուսալքության խարանդ հիշեցնելու 44 օր շարունակ «հաղթելու ենք»-ի հույսով ու բերկրանքով ապրող մեր հայրենակիցներին:

Ցավալի իրադարձությունից 2 տարի անց առաջին բանը, որ գալիս է յուրաքանչ-յուրիս մտքին, հետեւյալն է. իսկ ի՞նչ ունենք այսօր, ի՞նչ դասեր ենք քաղել պատերազմից կամ քաղել ենք արդյոք առհասարակ:

Մոտ երեսուն տարի համայն հայության ջանքերով կերտված ու ստեղծված Հայկական երկրորդ հանրապետությունը՝ Արցախը, մասնատվեց ու բազմակի մեկուկետե մասվա ընթացքում ընդամենը: Բացի 7 շրջաններից, Արցախը կորցրեց Հադրութն ու Շուշին, Արցախի անվտանգությունը ոչ թե հայերը, այլ ռուս խաղաղապահները սկսեցին ապահովել, ավելին՝ Հայաստանը վերջերս հայտարարեց, թե Արցախի անվտանգության առումով վաղուց է ձեռքերը լվացել ու մի կողմ քաշվել:

Տիրահոջակ հայտարարությունից երկու տարի անց ՀՀ իշխանության տարբեր ներկայացուցիչներ Արցախի Հանրապետությունից մնացած փոքրիկ՝ մի բռնապետ հատվածը կարողանում են Ադրբեյջանի կազմում մշակութային ինքնավարության կարգավիճակով անգամ պատկերացնել: Հայտարարության կետերից մեկն էլ ռազմագերիների պարտադիր ու անհապաղ վերադարձին էր վերաբերում, բայց մինչ օրս Բաքվում 44-օրյա պատերազմի հետեւանքով գերեվարված հայորդիներ են պահվում:

Աղետաբեր պատերազմի ավարտից երկու տարի անց հարցերի հարցը շարունակում է հետեւյալը մնալ. օղն, ի վերջո, փամկ է, թե՛ ոչ... Բաց է ոչ միայն Արցախի, այլև Հայաստանի Հանրապետության օդը: Հարցը թերեւս անօդաչու թռչող սարքերի՝ սողոցող ու ամեն պահի պայթելու պատրաստ ձայնի նման օդում կախված է մնում առ այսօր:


Այսօր լրանում է ՀՀ ԱԺ նախկին նախագահ, ՀՀ արտաքին գործերի ներկայիս նախարար Արարատ Միրզոյանին ծեծի ենթարկելու դեպքով քննության երկու տարին, սակայն այդպես էլ չի բացահայտվել, թե ով կամ ովքեր նրան ծեծեցին: «Ժողովուրդ» օրաթերթը գրել էր, որ 2020 թվականի նոյեմբերի 9-ի առավոտյան ՀՀ ազգային ժողովի դիմաց մեծ թվով անձինք ծեծի էին ենթարկել այն ժամանակվա խորհրդարանի ղեկավար Արարատ Միրզոյանին, որն այնուհետ տեղափոխվել էր հիվանդանոց եւ վիրահատության ենթարկվել: Եվ չնայած այս դեպքից անցել է ուղիղ երկու տարի, սակայն այդ գործով նախկինում կալանավորված անձինք այժմ գտնվում են անազատության մեջ: Նրանց պաշտպանները դիմում են նախաքննական մարմնին, որպեսզի այդ մարդիկ արդարացվեն, քրեական հետապնդումը դադարեցվի, սակայն ԱԱԾ-ի կողմից չի արվում ոչինչ: Մյուս կողմից էլ երկու տարվա ընթացքում նախաքննական մարմինը այդպես էլ չի կարողացել պարզել եւ բացահայտել, թե ովքեր են այդ օրը ծեծի ենթարկել Միրզոյանին, եւ գործը մինչեւ օրս դատարան այդպես էլ չի ուղարկվել: Հիշեցնենք, որ 2020թ. նոյեմբերի 9-ի լույս 10-ի գիշերը՝ պատերազմը դադարեցնելու մասին Հայաստանի Հանրապետության, Ռուսաստանի Դաշնության եւ Ադրբեյջանի Հանրապետության միջեւ ձեռք բերված համաձայնության վերաբերյալ հայտարարությունը զանգվածային լրատվության միջոցներում հրապարակվելուց հետո, Հայաստանի Հանրապետության տարբեր տարածքներում, հատկապես՝ մայրաքաղաք Երևանում գտնվող ՀՀ կառավարության, Ազգային ժողովի շենքերում եւ պետական նշանակության այլ օբյեկտներում զանգվածային անկարգություններ եղան:



Ուժային կառույցների օպերատիվ հետախուզական խմբերը կմտնեն մի շարք պաշտոնյաների տներ. ծանուցումների գործընթացը մեկնարկել է: «Ժողովուրդ» օրաթերթի տեղեկությունների համաձայն՝ ՀՀ պետական պաշտոնյաներն այս օրերին ծանուցումներ են ստանում Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի կողմից: Մեզ հասած տեղեկությունների համաձայն՝ ծանուցման մեջ հանձնաժողովը կոնկրետ հարցադրում է անում պետական պաշտոնյաներին եւ պահանջում հայտնել, թե այս կամ այն գույքի կառավարման հետ ինչ առնչություն ունեն պաշտոնյաները: «Ժողովուրդ» օրաթերթը գրել էր, որ Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովն ուշագրավ որոշում է կայացրել, որը խառնաշփոթ է ստեղծել պետական պաշտոն զբաղեցնող անձանց շրջանում: Այս պահի դրությամբ ցանկում ներառվել են 95 պետական պաշտոն զբաղեցնող անձինք, եւ չի բացառվում ցանկը ավելանալ: Եվ, ահա, այս սոր որոշումը որոշակի անհանգստություն է առաջացրել պետական պաշտոն զբաղեցնող անձանց շրջանում: Բանն այն է, որ Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովը համապատասխան վերլուծության ընթացքում ուժային կառույցների օպերատիվ-հետախուզական գործունեության բաժին դիմում է ներկայացնելու, որ կոնկրետ պետական պաշտոն զբաղեցնող անձանց գույքի մասով իրենց տեղեկություն տրամադրեն, ինչը ենթադրում է, որ այս որոշման արդյունքում չի բացառվում, որ ուժային կառույցները մտնեն պետական պաշտոն զբաղեցնող անձանց պատկանող սեփականություններ: Կստուգվել կենցաղին առնչվող մանրամասներ...Մեկ բառով ասած՝ պաշտոնյաների տները եւ ունեցվածքը խոշորացույցի տակ են:



Հայաստանի Ազգային ժողովը պետական միջոցների հաշվին խորհրդարանի ճաշարանի ճաշատեղաների համար ծախսել է 5 մլն դրամ գումար: «Ժողովուրդ» օրաթերթը տեղեկացավ, որ մեկ անձից գնման ընթացակարգով գնվել է չորստեղանի ճաշատեղան՝ աթոռներով: Թվով 25 հատ սեղան է գնվել, միավորի արժեքը կազմել է 200 հազար դրամ: Ազգային ժողովի աշխատակազմը պայմանագիր կնքել է անհատ ձեռներեց Մանուկ Գալստյանի հետ: Բացի այս, 6 մլն 940 հազար դրամ էլ Ազգային ժողովի աշխատակազմը ծախսել է շինարարական աշխատանքների համար: Այսինքն՝ մոտ 7 մլն դրամ ծախսվել է ճաշարանի վերանորոգման աշխատանքներն իրականացնելու նպատակով: Նշենք, որ մինչ այս՝ հոկտեմբերին, կառավարությունը չզեկուցվող նախագծերի թվում ընդունել էր որոշում՝ ԱԺ-ին թույլ տալով արտասահմանյան գործուղումների միջոցներից 31 մլն դրամով մեկ անձից գնում կատարել խորհրդարանի բուֆետ-ճաշարանի վերանորոգման համար: Այդ որոշման համաձայն՝ ՀՀ Ազգային ժողովի աշխատակազմը նախատեսում է իրականացնել Ազգային ժողովի բուֆետ-ճաշարանի բարեկարգման եւ վերագինման աշխատանքներ՝ ապահովելով ժամանակակից պրոֆեսիոնալ կենցաղային եւ հասարակական սննդի սարքավորումներով, օդափոխման համակարգով, սրահի համար նախատեսված կահույքով եւ սպասքով: Հավելենք, որ այս պահին շինաշխատանքները դեռ շարունակվում են:



ՔԱՂԱՔԱԿԱՆ

ԳՆԱԾՆ ԾԱՌՈՒՆԱԿՎՈՒՄ Է

ԻՆՉՔԱՆ ԿԲԱՐՉՐԱՆԱ ԿԱՐՏՈՏԻԼԻ ԳԻՆԸ

Հայաստանում գնաճը շարունակվում է, ու այն հասկալի է ցուցաբերում...

«Հայաստանում սոցիալական ոլորտում աճ արձանագրվել է, ինչն էլ հենց ուղղվել է սոցիալական տարբեր ծրագրերի իրականացմանը...



տահանվել: Եվ եթե դրսևում կարտոֆիլի համար շատ ավելի բարձր գին են առաջարկում...

Բացի այդ, բացատրում է Սարգսյանը, տնտեսագիտության մեջ այսպիսի գործոն կա...

նալ: Եթե կարտոֆիլի գինն անընդհատ բարձրանա, ապա քաղաքացիներն այն չեն գնելու...

Տնտեսագետը նաեւ այն տեսակետին չէ, որ այս տարի կարտոֆիլի գինը կարող է հասնել 500 դրամի շեմը...

ՍԵՎԱԿ ՎԱՐՊՈՒՅԱՆ

ՆԻԿՈՒ ՓԱՇԻՆՅԱՆԸ ԽԱՔԵԼ Է ՄԱՍ 130

ՆԻԿՈՒ ՓԱՇԻՆՅԱՆԸ ԽԱՔԵԼ Է ՄԱՍ 130

ՀՀ վարչապետ, «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության հիմնադիր Նիկոլ Փաշինյանը «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության վեցերորդ համաժողովի ընթացքում իր ելույթում համոզմունք հայտնեց...

ՎԱՇԻՆԳՏՈՆՅԱՆ ՀԱՆԳԻՊՈՒՄ

Հայաստանի եւ Ադրբեջանի արտաքին գործերի նախարարները Վաշինգտոնում հանդիպումների ընթացքում մտքեր են փոխանակել...

ՈՐՈՇՈՒՄ ԿԱՅԱՅՎԵՑ

ՍԵՂԱՄ ԿԱԶՄԱՌՎ ՀԱՆԳԻՊՈՒՄ

Շաբաթ օրը՝ նոյեմբերի 5-ին, ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանը «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության կենտրոնական գրասենյակում հանդիպել էր մի քանի կուսակիցների հետ...

Հետաքրքիր է, որ այդ հանդիպումը տեղի ունեցավ ՔՊ վարչության ընտրության շուրջ ստեղծված հայտնի իրավիճակից հետո...

Նաեւ ՔՊ աշխատակազմի ղեկավար, Վալոնտին Թորոսյանը Տրդատ Սարգսյանը Ուշագրավ զուգահեռությամբ վերջինս երեկ հայտարարեց...

Ինչո՞ւ. արդյոք շաբաթ օրը տեղի ունեցած հանդիպման ժամանակ քննարկվել է վարչության կազմի ընտրության հարցը...

Հավելենք, որ երեկ ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանը հանդիպել է ՔՊ խմբակցության պատգամավորների հետ...

ՆԱԻՐԱ ՀՈԿՅԱՆՆԻՍՅԱՆ

ԻՐԱՎԻՃԱԿ

ՆԱԽԱԳԻԾ

ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՆՈՐ ՀԱՄԱԿԱՐԳ

ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ԹՎԱՔԱՆԱԿ

Հայաստանի բնակչությունն ավելացել է: ArmLur.am-ը ՀՀ վիճակագրական կոմիտեից տեղեկացավ, որ ՀՀ մշտական բնակչության թվաքանակի ցուցանիշն այս տարվա հոկտեմբերի 1-ի դրությամբ կազմել է 2 մլն 970 հազար 600 մարդ, այդ թվում՝ քաղաքայինը՝ 1 մլն 895 հազար 100 մարդ, եւ գյուղականը՝ 1 մլն 75 հազար 500 մարդ: Ի դեպ, տեղեկացնենք, որ նախորդ տարվա հոկտեմբերի 1-ին մեր հանրապետությունում մշտական բնակչության թվաքանակը կազմել էր 2 մլն 967 հազար 100 մարդ. մեկ տարվա ընթացքում մշտական բնակչության թվաքանակը 3500-ով ավելացել է: Երեւանում բնակչության թվաքանակը մեկ տարվա ընթացքում 300-ով է ավելացել. այս տարվա հոկտեմբերի 1-ի դրությամբ Երեւանում բնակչության թվաքանակը կազմել է 1 մլն 96 հազար 400՝ նախորդ տարվա 1 մլն 96 հազար 100-ի դիմաց:

Ի դեպ, տեղեկացնենք, որ ՀՀ որոշ մարզերում բնակչության թվաքանակն ավելացել է՝ տարբեր տեղաշարժերի հաշվին: Արմավիրի մարզում 2021թ. հոկտեմբերի 1-ի դրությամբ բնակչության թվաքանակը կազմել է 264 հազար 800, իսկ այս տարվա նույն ժամանակահատվածում՝ 265 հազար 900 մարդ: Արարատի մարզում եւս բնակչության թվաքանակն ավելացել է՝ 257 հազար 500-ից հասնելով 258 հազար 200-ի: Արագածոտնի մարզում մեկ տարվա ընթացքում բնակչության թվաքանակը 124 հազար 700-ից դարձել է 125 հազար 300 մարդ:

Ի դեպ, Գեղարքունիքի մարզում բնակչության թվաքանակն ավելացել է 900-ով:

Սյունի կողմից՝ բնակչության թվաքանակը նույն է մնացել է Վայոց ձորի, Տավուշի, Սյունիքի մարզերում, իսկ Շիրակի եւ Լոռու մարզերում բնակչության թվաքանակը մեկ տարվա ընթացքում պակասել է: Լոռիում մեկ տարվա ընթացքում բնակչության թվաքանակը պակասել է 700-ով, իսկ Շիրակի մարզում բնակչության թվաքանակը պակասել է 100-ով՝ 230 հազար 400-ից դառնալով 230 հազար 300:

ՉԻՈՒ ԸՆՀԱԳՈՐԾՄԱՆ ԳԵՊԸ

Նոյեմբերի 6-ին սոցիալական ցանցում «Գյումրի քաղաքում կառապանը դաժան վերաբերմունք է ցուցաբերում իր ձիու նկատմամբ՝ շահագործելով բաց վերքերով» վերտառությամբ գրառում էր եղել: Ոստիկանությունն իրականացրել է ստուգողական գործողություններ, եւ հրապարակման հիման վրա ոստիկանության Կոմայրիի բաժնում կազմված փաստաթղթերը ուղարկվել են նախաքննական մարմին քրեական վարույթ նախաձեռնելու համար:

Նոյեմբերի 7-ին փաստի առթիվ նախաձեռնվել է քրեական վարույթ: Ավելի վաղ ArmLur.am-ը անդրադարձել էր թեմային՝ գրելով, որ տեսանյութում երեւում է, թե ինչպես է Գյումրիում հայտնի ֆայտոնի ձին ուժասպառ եղել եւ արնաքան վիճակում չի կարողանում քայլել:

Նոյեմբերի 14-ին ՀՀ դաժանության նախարար Մուրեմ Պաղիկյանը խորհրդարանում կմասնակցի ՀՀ ԱԾ դաժանության եւ անվտանգության հարցերի մեծական հանձնաժողովի նիստին՝ ներկայացնելով «Զինվորական ծառայության եւ զինծառայողի կարգավիճակի մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ եւ լրացումներ կատարելու մասին նախագիծը: Ըստ այդմ, ներդրվելու է ծառայության նոր ծրագիր, այս անգամ՝ Երեւանի եւ ստայական կազմերի դասադաս զինվորական ծառայությունից դաշնագրային զինվորական ծառայության անցման միջոցով, «Պաժան հայրենյաց» ծրագիր անվամբ, որի ժամկետը նախատեսվում է 5 տարի: Կնքված դաշնագրի ժամկետի ավարտից հետո, անկախ զինծառայությունից արձակվելու կամ ծառայությունը շարունակելու ցանկությունից, կամ առողջական վիճակի դասնառով վաղաժամկետ զորացրվելու դեպքում այդ զինծառայողներին կհասկանալի դասվով՝ 5 մի րում չափով, որը զինծառայողը (կամ բաղաձայնի) ճնշումներ է իր հայեցողությամբ:

Հիմնավորման մեջ նշվում է, թե Պաշտպանության նախարարության կողմից ներդրված նախկին ծրագիրը, որը շարքային կազմի մյուս պարտադիր զինծառայողների համեմատ ավելի մեծ չափով ամսական դրամական բավարարման հաշվարկում էր ենթադրում եւ ամսական 7 օրացուցային օր ժամկետով արձակուրդի տրամադրում, ինչպես նաեւ ծառայության ժամկետի ավարտով կամ առողջական վիճակի պատճառով վաղաժամկետ զորացրվելու դեպքերում պատվովճարի հատկացում, չի արդարացրել իրեն:

Մասնավորապես, այդ ծրագրից հետո համապատասխան ծառայություն անցնելու ցանկություն հայտնողների քանակն ի սկզբանե չի բավարարել ակնկալվող քանակները՝ աստիճանաբար նվազելով, ինչպես նաեւ 2021-2022թթ. զորակոչների ընթացքում չարձանագրվեց ոչ մի դիմում: Բացի այդ, 2020 թվականի ռազմական



գործողություններից հետո բավական թվով զինծառայողներ վաղաժամկետ հրաժարվեցին ծրագրից եւ շարքային կազմի պարտադիր զինվորական ծառայության 24-ամսյա ժամկետը լրացած լինելու հիմքով արձակվեցին զինվորական ծառայությունից: Ներկայումս ծրագրով զինվորական ծառայությունը շարունակում են ընդամենը երկու զինծառայող, որոնց ծառայության 36-ամսյա ժամկետն ավարտվում է 2023 թվականի հունվարին: Նոր օրենքի նախագծի համաձայն՝ ՀՀ պաշտպանության նախարարության կողմից նշված վայրում եւ պայմաններով շարքային կազմի պարտադիր զինվորական ծառայություն անցնելու համակարգը փոխարինվում է շարքային եւ սպայական կազմերի պարտադիր զինվորական ծառայությունից պայմանագրային զինվորական ծառայության անցման նոր համակարգով, այդ ծառայությունն անցած զինծառայողների համար սահմանվում է պատվովճարի հաշվարկում ՀՀ կառավարության որոշմամբ սահմանված չափով եւ կարգով, ՀՀ պաշտպանության նախարարության կողմից, նշված ծառայության վայրում եւ պայմաններով շարքային կազմի թափուր պաշտոնի համալրման նպատակով 2022 թվականի հոկտեմբերի 4-ին հայտարարված մրցույթը:

Մի պարտադիր զինվորական ծառայություն անցնելու ծրագրի դադարեցմամբ պայմանավորված, սահմանվում են անցումային դրույթներ:

Օրենքի նախագիծը կապված է ՀՀ կառավարության 2021-2026թթ. ծրագրի «1.3 Պաշտպանության ոլորտ. Զինված ուժերի բարեփոխումներ» բաժնի վեցերորդ պարբերության եւ 1-ին ու 9-րդ կետերի պահանջների՝ արհեստավարժ (պրոֆեսիոնալ) բանակի աստիճանաբար անցման, պարտադիր զինծառայության ժամկետների կրճատման՝ ի հաշիվ պայմանագրային ծառայության աճի, զինծառայողների աշխատավարձերի եւ այլ վճարների բարձրացման, զինծառայության գրավչության եւ զինծառայողի հեղինակության բարձրացման մեխանիզմների կատարելագործման, ինչպես նաեւ ՀՀ կառավարության 18.11.2021թ. N 1902-L որոշմամբ հաստատված ՀՀ կառավարության 2021-2026 թվականների գործունեության միջոցառումների ծրագրի «Պաշտպանության նախարարություն» բաժնի 9-րդ կետի 9.1 ենթակետի պահանջների կատարման հետ:

ՆԱԽՈՒ ԳՈՒՄՆԱԿԱՆ

ՕՐՎԱԿԱՆԱԿԱՆ ԱՐՁԱԿՈՒՐԳՆԵՐ

ՀՀ վիճակագրական կոմիտեի նախագահ Ստեփան Մնացականյանին տրամադրվել է 2020-2021 թվականների աշխատանքային տարվա ամենամյա արձակուրդի մասը՝ 5 աշխատանքային օր տեւողությամբ, 2022 թվականի նոյեմբերի 21-25-ը ներառյալ: Որոշումը ստորագրել է ՀՀ վարչապետը:

ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանի որոշմամբ՝ նաեւ Լոռու մարզպետ Արամ Խաչատրյանը 12 օրով արձակուրդ է մեկնել:

ԳԼԽԱՎՈՐ ԳԱՏԱԽԱՋԻ ՏԵՂԱԿԱԼ

Գլխավոր դատախազ Աննա Վարդապետյանի հրամանով՝ իրավաբանական գիտությունների թեկնածու, դոցենտ Անահիտ Մանասյանը երեկ նշանակվել է ՀՀ գլխավոր դատախազի տեղակալ: 2022 թվականի նոյեմբերի 7-ին Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազին առընթեր որակավորման հանձնաժողովը կազմակերպել է անցկացրել է գլխավոր դատախազի տեղա-

կալի թափուր պաշտոնի համալրման նպատակով 2022 թվականի հոկտեմբերի 4-ին հայտարարված մրցույթը:

Մրցույթին դիմել եւ մասնակցել է Անահիտ Արտյոմի Մանասյանը: Մրցույթի արդյունքներն ամփոփվել են գաղտնի քվեարկությամբ: Հանձնաժողովի կողմից միաձայն քվեարկությամբ որոշում է կայացվել դրական եզրակացություն ներկայացնել Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազին Անահիտ Մանասյանին՝ Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազի տեղակալի պաշտոնին նշանակելու վերաբերյալ:

ՈԱԶՄԱԿԱՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ

Հավաքական անվտանգության պայմանագրի կազմակերպության (ՀԱՊԿ) անդամ երկրների զինված ուժերի գլխավոր շտաբների ղեկավարները նոյեմբերի 10-ին տեսակոնֆերանսի ռեժիմով կքննարկեն ռազմական համագործակցության հարցերը: Նոյեմբերի 8-ին ՏԱՍՍ-ին հաղորդել է ՀԱՊԿ-ի Միացյալ շտաբի մամուլի քարտուղար Վլադիսլավ Շչեգրիկովիչը:

«Ռուսաստանի Դաշնության զինված ուժերի ռազմական կոմիտեի նախագահ, Գլխավոր շտաբի պետ - Ռուսաստանի Դաշնության պաշտպանության նախարարի առաջին տեղակալ, բանակի գեներալ Վալերի Գերասիմովի ղեկավարությամբ նիստին կմասնակցեն Հայաստանի Հանրապետության, Բելառուսի Հանրապետության, Ղազախստանի Հանրապետության, Ղրղզստանի Հանրապետության, Տաջիկստանի Հանրապետության զինված ուժերի գլխավոր շտաբների պետերը, ՀԱՊԿ-ի Միացյալ շտաբի պետ, գեներալ-գնդապետ Անատոլի Սիդորովը, ինչպես նաեւ ՀԱՊԿ-ի գլխավոր քարտուղարի տեղակալ Տախիր Խայրուլլոեւը»,- հայտնել է Շչեգրիկովիչը:

ՀԱՊԿ-ի Միացյալ շտաբի մամուլի քարտուղարը հավելել է, որ կողմերը կքննարկեն «ՀԱՊԿ-ի հավաքական անվտանգության տարածաշրջաններում ռազմական անվտանգության մարտահրավերներն ու սպառնալիքները եւ դրանց հակազդման միջոցները, ՀԱՊԿ-ի խաղաղարար ներուժի զարգացումը, այդ թվում՝ ՄԱԿ-ի խաղաղապահ գործունեությանը միանալու առումով, ՀԱՊԿ-ի անդամ պետությունների պետական (ռազմական) ավիացիայի միջազգային թռիչքների կազմակերպման եւ ապահովման կատարելագործումը, մի շարք այլ հրատապ հարցեր»:

ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎՈՒՄ

ԳԱՏԱՎՈՐՆԵՐԻ ԽՆԴԻՐՆԵՐԻ ԶՆՆԱՐԿՈՒՄ

Գատավորները համոզված են, որ միայն օրենսդրական փոփոխություններ կատարելով է հնարավոր նվազեցնել դատարանների գերծանաբեռնվածությունը: Գատավորները նման ճեպակետ հայտնեցին ԱԾ մարզու իրավունքների և հանրային հարցերի մեծահասակ հանձնաժողովի նախագահ Թագուհի Թովմայանի նախաձեռնությամբ կազմակերպված «ՀՀ դատարանների գերծանաբեռնվածության խնդիրները և դատական գործը ողջամիտ ժամկետում ֆինդը՝ որդես «Մարզու իրավունքների և հիմնարար ազատությունների դաշտանության մասին» եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածով սահմանված՝ անձի արդար դասախոսության իրավունքի սար» թեմայով ֆննարկմանը:



Մարզու իրավունքների պաշտպանության և հանրային հարցերի մշտական հանձնաժողովի նախագահ Թագուհի Թովմայանը նշեց, որ դատարանների ծանրաբեռնվածությունը խոչընդոտում է նաև դատավորների մասնագիտական գործունեության իրականացմանը, դատավորների կողմից դատական ակտերի կայացման ողջամիտ ժամկետի պահպանմանը: «Գաղտնիք չէ, որ դատարանների ծանրաբեռնվածությունը, նույնիսկ առանց վիճակագրական տվյալների մեջբերումների, անընդհատ և հաճախ անզգամեղով աճելու միտում ունի», -ասաց Թովմայանը:

կանալ, թե ինչու է այդ գործառնությունը վերապահվել դատարաններին, ապա որտե՛ս ողջամիտ պատճառ չենք կարողանա վկայակոչել: Ես պնդում եմ, որ այդ փուլում դատավորի կողմից որտե՛ս բովանդակային գործառնությո՛ւն չի իրականացվում, գուտ տեխնիկական աշխատանք է, որը տանում է դատավորի աշխատաժամանակի գերակշիռ մասը», - ասաց դատավորը՝ առաջարկելով դատարաններին, դատավորներին չվերապահել կատարողական թերթերի տրամադրումը և օրինական ուժի մեջ մտած դատական ակտերը Հարկադրի կատարման ծառայություններ կայացնել:

Վարչական դատարանի դատավոր Ռուզաննա Ազրոյանի կարծիքով՝ հնարավոր է դատարանների գերծանաբեռնվածությունը նվազեցնել՝ գրոյական ֆինանսական միջոցներ ծախսելով, ընդամենը կատարելով օրենսդրական փոփոխություններ: Վարչական դատարանում գրավոր ընթացակարգ նախատեսված չէ, բացառությամբ որոշ կոնկրետ դեպքերի: «Եթե օրենսդրությամբ նախատեսենք, որ Վարչական դատարանում գործերը կարող են քննվել գրավոր ընթացակարգով, բացառությամբ օրենսդրությամբ նախատեսված դեպքերի, վատահեցնում եմ, որ Վարչական դատարանի ծանրաբեռնվածությունն ավելի քան 30-40 տոկոսով կնվազի», -ասաց Ազրոյանը:

Պատգամավորի խոսքով՝ դատական ակտերը այս պահի դրությամբ կայացվում են ամիսներ, նույնիսկ տարիներ անց, որոշ դեպքերում դատավորները կայացնում են ոչ այնքան խորը պատճառաբանություն ունեցող ակտեր, որոնք դառնում են թույլ և խոցելի:

Այսօր գումարի բռնագանձման պահանջներով հայցերը կազմում են ընդհանուր իրավասության դատարաններ իրավասության դատարաններ կայացվող հայցերի ոչ պակաս, քան 80 տոկոսը: Դատավորի խոսքով՝ հայցագների միջին չափը տատանվում է մինչև 500 հազարի դրամի շրջանակներում: Այս առնչությամբ նա առաջարկում է, որ գումարի բռնագանձման պահանջներով հայցերն առհասարակ դատական քննության առարկա չդարձվեն, դրանք հանձնարարվեն նոտարներին:

Ըստ Վարչական դատարանի դատավորի՝ վարչական իրավախախտումների վերաբերյալ գործերը մեծամասամբ պետք է դուրս գան իրենց վերահսկողությունից, օրինակ՝ տեսչական մարմինը ոչ թե պետք է գնա դատարան՝ ասելու, որ անձին տուգանեն, այլ ինքը պետք է այդ պատասխանատվության միջոցը կիրառի: **ՔՆՆՐ ՍՆՆՈՒԿՅԱՆ**

Քննարկմանը մասնակցող Երեան քաղաքի ընդհանուր իրավասության դատարանի դատավոր Աննա Փիլոսյանը նշեց, որ դատարանների գերծանաբեռնվածությունն ունի թե՛ օբյեկտիվ, թե՛ սուբյեկտիվ պատճառներ: Ըստ նրա՝ օրենսդրական դաշտում փոփոխություններով կարելի է համակարգային ձեռով խնդիրն լուծում տալ: «Դատավորի գործառնությո՛ւն մեջ այսօր ներառված է կատարողական թերթերի տրամադրում: Եթե փորձենք հաս-

ԼՈՒՐԵՐ

ՁԵՐԲԱԿԱԼԵԼ ԵՆ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻՆ

Նոյեմբերի 7-ին ոստիկանության Կենտրոնական բաժնի քրեական հետախուզության բաժանմունքում տեղեկություններ էին ստացվել, որ մի խումբ անձինք Երվանդ Քոչարի փողոցի թիվ 15 շենքի բակում վիճում են ու ծեծում իրար: Կենտրոնական բաժնի քրեական հետախուզության տեղեկություններով՝ Նրանց մոտ գնեքեր ու դանակներ են եղել: Տեղում իրականացված օպերատիվ-հետախուզական միջոցառումներով պարզվեցին միջադեպի մասնակիցների ինքնությունը և կատարվածի որոշ հանգամանքներ: Նախկան տվյալներով՝ Երեանում բնակվող մի խումբ տղամարդիկ հնչեցրել էին սեռական բնույթի հայտնաբերում, քարերով, փայտե մահակներով հարվածներ էին հասցրել Արմավիրի և Արագածոտնի մարզերում բնակվող մի խումբ տղամարդկանց: Այդ ընթացքում երեանցիներից մեկը նաև դանակով խփել էր Արմավիրի մարզում բնակվող 40-ամյա տղամարդուն, ապա փայտե մահակներով և քարերով վնասել էին նրա մեքենան: Արագածոտնի մարզում շնորհիվ ոստիկանության ծառայողներին հաջողվել է ձերբակալել մասնակիցներից մի քանիսին: Այդ ընթացքում՝ Նրանցից մեկը մեքենայով փախուստի փորձ է արել՝ փորձելով վրաերթի ենթարկել ոստիկանության ծառայողներին, իսկ ձերբակալվելու ժամանակ ձեռք էր հարկում ոստիկաններից երկուսի՝ ձեռքերը՝ պատճառելով մարմնական վնասվածքներ: Դեպքի վայրի զննությամբ հայտնաբերվել են մարտական թմրակալվոր ատրճանակ, պարկուճ, «Մազդա» մակնիշի ակտոմեքենա, որի մեջ 2 ատրճանակ կար, և այլ: Մեքենաները տեղափոխվել են բաժնի պահպանվող հատուկ տարածք: Դեպքի առթիվ նախաձեռնվել է քրեական վարույթ: Հանգամանքները նախաքննությամբ պարզվում են:

ՀԱՆԳԱՄԱՆՔՆԵՐԸ ՊԱՐԶՎՈՒՄ ԵՆ

ՀՀ քննչական կոմիտեից ArmLur.am-ին հայտնեցին, որ ՀՀ քննչական կոմիտեի Արարատի մարզային քննչական վարչությունում նախաձեռնված քրեական վարույթի շրջանակներում ձեռնարկվում են քննչական և վարույթային անհրաժեշտ գործողություններ՝ Ոսկետափ բնակավայրի 30-ամյա բնակչի՝ հրագնեային վնասվածք ստանալու բոլոր հանգամանքները պարզելու ուղղությամբ: 30-ամյա տղամարդու՝ «աջ ստորին վերջույթի հրագնեային կոտորակային վիրավորում» ախտորոշմամբ՝ Վեդու բժշկական կենտրոն, այնուհետև Երեան քաղաքի «Էրեբունի» բժշկական կենտրոն տեղափոխվելու վերաբերյալ հաղորդումը ստացվել է 2022թ. նոյեմբերի 7-ին՝ ժամը 12:25-ին: Դեպքի առթիվ նախաձեռնվել է քրեական վարույթ՝ ՀՀ քրեական օրենսգրքի 167-րդ հոդվածի 2-րդ մասի 8-րդ կետով: 30-ամյա տղամարդը ճանաչվել է տուժող: Պարզվել են նշված վնասվածքը ստանալու մի շարք հանգամանքներ, այդ թվում՝ դեպքի վայրը, առերեսությո՛ւն հանցագործություն կատարած անձի ինքնությունը, ով հանդիսանում է նույն բնակավայրի 37-ամյա բնակիչ: Ձեռնարկվում են միջոցառումներ՝ 37-ամյա տղամարդուն, ինչպես նաև հանցագործության գործիք հանդիսացող հրագնեային հայտնաբերվելու և վարույթի իրականացնող մարմինն ներկայացնելու ուղղությամբ: Նախաքննությունը շարունակվում է:

ՆՈՐ ՄԱՆՐԱՄԱՍՆԵՐ

ԽՈՇՈՐ ՉԱՓԵՐՈՎ ԳՈՒՅՔԻ ՀԱՓՇՏԱԿՈՒԹՅՈՒՆ

Մ. Ն.-ն, հանդիսանալով «Երեանի Մխիթար Հեռացու անվան դեղատնային փոփոխական համալսարան» հիմնադրամի նախկին ղեկավար, ինչպես անձամբ, այնուհետ էլ նույն հիմնադրամի կողմից ստեղծված «Հեռացի» արհեստակցական կազմակերպության նախագահ Մ.Մ.-ի օժանդակությամբ, դիսավորությամբ, վասնման եղանակով, ծառայողական դիրքն օգտագործելով, կատարել է իրեն վստահված, իր սփորնմանը հանձնված, հիմնադրամին դասկանող առանձնադեպ խոշոր չափերով՝ 39 մլն 660 հազար դրամի չափով գույքի հափեսակություն:

խորհրդի նախագահի հետ առնչություն ունեցող «Նավասար» ՍՊ ընկերության «Շովասար» հյուրանոցային համալիրի տնօրեն Վ.Ս.-ից շուկայականից բարձր գներով հանգստի տներ ձեռք բերելու և ավել վճարվելիք գումարները Վ.Ս.-ին վերադարձնելու շուրջ: Վերոնշյալ արարքի կատարման համար Գլխավոր դատախազությունը Մ.Ն.-ի նկատմամբ քրեական հետապնդում է հարուցել:

չափերով հափշտակություն) հանցավոր արարքի կատարում:

Մ.Ն.-ին մեղադրվում է հանցանքը կատարելու պահին գործող Քրեական օրենսգրքի 179-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով նախատեսված՝ վատման եղանակով առանձնապես խոշոր չափերով գույքի հափշտակություն (ներկայում գործող Քրեական օրենսգրքի 256-րդ հոդվածի 3-րդ մասի 3-րդ կետով նախատեսված՝ վստահված գույքի առանձնապես խոշոր

Մ.Ս.-ի նկատմամբ ես հարուցվել է քրեական հետապնդում հանցանքը կատարելու պահին գործող Քրեական օրենսգրքի 38-179-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով նախատեսված՝ վատման եղանակով առանձնապես խոշոր չափերով գույքի հափշտակության օժանդակություն (ներկայում գործող Քրեական օրենսգրքի 46-256-րդ հոդվածի 3-րդ մասի 3-րդ կետով նախատեսված՝ վստահված գույքի առանձնապես խոշոր չափերով հափշտակության օժանդակություն) կատարելու համար: Ձեռնարկվում են անհրաժեշտ միջոցներ՝ կոռուպցիոն սխեմայում ներգրավված անձանց ամբողջական շրջանակը պարզելու և նրանց նկատմամբ հանրային քրեական հետապնդում հարուցելու ուղղությամբ:

● Ըստ ոստիկանության տվյալների՝ նոյեմբերի 7-ից 8-ը Հայաստանի Հանրապետությունում բացահայտվել է հանցագործության 57 դեպք, որոնցից 8-ը՝ նախկինում կատարված:



ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

ՄԱՐԶ

ՆՈՐ ԿԻՆ ՂԵԿԱՎԱՐԸ

Նոյեմբերի 10-ին՝ ժամը 11:00-ին, Բերդի համայնքապետարանում տեղի կունենա սեպտեմբերի 25-ին կայացած Բերդ խոշորացված համայնքի ավագանու համամասնական ընտրություններով ձեւավորված Բերդ համայնքի նորընտիր ավագանու առաջին նստաշրջանի առաջին նիստը: Նիստի օրակարգում ընդգրկված են հետևյալ երեք հարցերը՝ Բերդ համայնքի ղեկավարի ընտրություն, համայնքի ղեկավարի երդման արարողության կազմակերպական հարցերի ներկայացում, ավագանու առաջին նստաշրջանի հերթական նիստի գումարման օրվա որոշում: Բերդ խոշորացված համայնքի ղեկավար Զարուհյուն Մանուչարյանի նկատմամբ քրեական գործ է հարուցվել պաշտոնեական լիազարությունները չարաշահելու հոդվածով, նա 2021 թվականի նոյեմբերի 9-ից գտնվում էր անազատության մեջ: Նրա խափանման միջոց կալանքը անցած ամիս փոխվել է գրավով, եւ հոկտեմբերի 10-ից Զարուհյուն Մանուչարյանը կրկին անցել է համայնքի ղեկավարի իր պարտականությունների կատարմանը: Սեպտեմբերի 25-ի ընտրություններում հաղթած «Զորավոր համայնք» դաշինքի ավագանու թեկնածուների ցանկը գլխավորող Զ. Մանուչարյանը, կալանքի տակ գտնվելով, գրավոր դիմել է թիվ 38 ընտրատարածքային ընտրական հանձնաժողով՝ հրաժարվելով Բերդի ավագանու անդամությունից: Նույն կերպ ավագանու անդամությունից հրաժարական է տվել Բերդ խոշորացված համայնքի ղեկավարի տեղակալ, «Զորավոր համայնք» դաշինքի ավագանու թեկնածուների ցանկի 2-րդ համար Սամվել Զովսեփյանը, որը սեպտեմբերի 30-ից գտնվում է կալանքի տակ: Ս. Զովսեփյանը մեղադրվում է Բերդ համայնքի Ներքին Կարմիրաբյուր գյուղի մանկապարտեզի տնօրենի ժամանակավոր պաշտոնակատարին քարոզչություն հարկադրելու համար: Զ. Մանուչարյանի եւ Ս. Զովսեփյանի կողմից ավագանու անդամությունից հրաժարվելը գործարք չէր իշխանության հետ, այլ քայլ, որը հնարավորություն կտա սեպտեմբերի 25-ին կայացած ավագանու ընտրություններում հաղթած «Զորավոր համայնք» դաշինքի ավագանիների ցանկից նոյեմբերի 10-ի նիստում ընտրել Բերդ խոշորացված համայնքի նոր ղեկավարի: Բերդ համայնքից՝ հավաստի աղբյուրից, «Ժողովուրդ» օրաթերթին տեղեկացրին, որ նոյեմբերի 10-ին Բերդ խոշորացված համայնքի ղեկավար է ընտրվելու «Զորավոր համայնք» դաշինքի ավագանու թեկնածուների ցանկի 3-րդ համար, 52-ամյա Աստղիկ Զակարյանը, որը ԶՕՖ-ի երեխաների իրավունքների պաշտպանության «Մարտիգյան» կենտրոնի ղեկավարն է: «Զորավոր համայնք» դաշինքում այդ ընտրությունը պատճառաւորում են նրանով, որ դաշինքի ավագանու թեկնածուների ցանկի առաջին երկու համարները ավագանու թեկնածությունից հրաժարական են տվել, ուստի արդար է, որ դաշինքի ավագանու թեկնածուների ցանկի 3-րդ համարը ընտրվի Բերդ խոշորացված համայնքի ղեկավար:

ՈՍԿԱՆ ՍԱՐԳՍՅԱՆ  
Տավուշ

ՇՈՒՇԻ

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՆԲԱԺԱՆԵԼԻ ՄԱՍԸ

Այսօրվա օկուպացված եւ հայաթափված Շուշին Արցախի երկրի զսման ենթարկելու թուրք-ադրբեջանական դարավոր եւ անփոփոխ ֆաղափականության իրական օրինակ է: ArmLur.am-ը հայտնում է, որ սոցիալական ցանցի իր էջում Արցախի մարդու իրավունքների դաշտում Պեղամ Սեփանյանը, անդրադառնալով Ադրբեջանի կողմից Շուշի ֆաղափ բռնազավթման երկրորդ տարեկիցին, գրել է.



«2020 թվականի աշնան Արցախի ժողովրդի դեմ սանձազերծված պատերազմի հետեւանքով Ադրբեջանի կողմից բռնազավթվել են Արցախի Զանրապետության շուրջ 200 բնակավայրեր, այդ թվում հայկական մշակույթի կենտրոն Շուշին: Լեռնային Ղարաբաղի Ադրբեջանին բռնակցելու վերաբերյալ 1921 թվականի հուլիսի 5-ի ապօրինի որոշման մեջ որպէս ձեւավորվելիք հայկական ինքնավարության կենտրոն էր սահմանվում Շուշի քաղաքը, սակայն Շուշին Արցախից օտարելու հեռահար նպատակադրությամբ 1923 թ.-ին, երբ Արցախի մի փոքրիկ հատվածում ձեւավորվեց Լեռնային Ղարաբաղի Ինքնավար Մարզը, կենտրոն դարձավ ոչ թե Շուշին, այլ Ստեփանակերտը: Շուշին զավթելու, նրա հայկականությունը աղավաղելու եւ այն ադրբեջանական ներկայացնելու ուղղությամբ Ադրբեջանը գործել է մշտապես: Քաղաքը յուրացնելու ընթացքում՝ ինչպէս 1900-ականների սկզբին, այնպէս էլ 2020 թ.-ին, թուրք-ադրբեջանական տանդեմի հիմնական գործիքները եղել են էթնիկ զտումն ու ցեղասպանությունը՝ հայ բնակչության ֆիզիկական ոչնչացումը, դեպրոտացիան, նրանց ստեղծած հոգեւոր-մշակութային արժեքների ոչնչացումն ու աղավաղումը: Շուշիի մշակութային ժառանգությունը քաղաքի հայկական պատկանելության ինքնատիպ վկայություն է: Ռա է պատճառը, որ դեռ պատերազմի օրերին երկու անգամ դիտակորոյալ թիրախավորվել է Ղազանցեցոց Սուրբ Ամենափրկիչ եկեղեցին, հրադադարից հետո շարունակաբար արծծվել են Սուրբ Զովհաննէս Սկրտիչ (Կանաչ ժամ) եկեղեցին եւ Շուշիում

գտնվող բազմաթիվ հայկական մշակութային արժեքներ: Ադրբեջանը շարունակաբար ավերում է քաղաքի քաղաքացիական ենթակառուցվածքները, տները, բազմաբնակարան շէնքերը: Այսօրվա օկուպացված եւ հայաթափված Շուշին Արցախի էթնիկ զտման ենթարկելու թուրք-ադրբեջանական դարավոր եւ անփոփոխ քաղաքականության իրական օրինակ է: Տարբեր առիթներով միջազգային պատվիրակություններ տանելով Շուշի՝ Ադրբեջանը փորձում է լեգիտիմացնել իր ագրեսիան: Բոլոր նրանք, ովքեր այցելում են Շուշի, իրենց քայլով հանցակից են դառնում մարդկանց տեղահանությանը եւ լեգիտիմացում ուժի կիրառումը, ագրեսիան եւ օկուպացիան: Այսօրվա բռնազավթումը չի փոխում Շուշիի կարգավիճակը. այն եղել ու շարունակելու է մնալ Արցախի Զանրապետության անբաժանելի մասը»: Արցախյան հարցին անդրադարձել է նաեւ ԱԺ պատգամավոր Տիգրան Արախանյանը: «Արցախը ներքին վերադասավորումների եւ փոփոխությունների շեմին է, ինչն առաջին հերթին պայմանավորված է պետնախարարի լիազորությունների առումով՝ նոր վարչապետի նշանակմամբ», - գրել է ԱԺ պատգամավոր Տիգրան Արախանյանը:

«Արդյոք պետնախարարի նշանակմամբ փաստացի նաեւ ամբողջական իշխանափոխություն է աստիճանաբար արվում դեռ վաղ է խոսել, սակայն այն, որ Արցախում ամենավերելից քաղաքական, կադրային, մտածողության, մշակույթի, գաղափարական փոփոխության անհրաժեշտություն կա, ակնհայտ է: Դեռ պարզ չէ, թե որոնք կդառնան կառավարության նոր առաջնահերթությունները, ինչքանով դրանք կյանքի կկոչվեն կամ Արցախում որակյալ փոփոխությունների կհանգեցնեն, բայց պետք է արձանագրել, որ Արցախի ճակատագիրը, ի թիվս մեծ թվով այլ գործոնների, շատ բանով կախված է Արցախում եղած պոտենցյալի լիարժեք իրացումից եւ արդյունավետ կառավարման համակարգից: Արցախում պետք է արմատական փոփոխությունների գնալ. դրանք մի կողմից պետք է սահուն լինեն, մյուս կողմից՝ շատ արագ. ժամանակը շատ քիչ է: Արցախում առկա այս իրավիճակն ու Զայաստանում հանձնողների՝ իշխանության ղեկին լինելը շարունակ նվազեցնում են Զայաստանի ու Արցախի դիմադրության ու պայքարի պոտենցյալը: Չնայած ստեղծված բարդ իրադրությանը՝ շարունակում են պնդել՝ բեկում մտցնելու հնարավորություն դեռ ունենք», - գրել է նա:

Ն.Զ.

ՈՐԿ ԵՎ ՂԵԿԱՎԱՐԸ

ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԽՈՒՄԲ ԿՍՏԵՂԾՎԻ

«Հ վարչապետը նոր որոշում է կայացրել, որով ղեֆ է ստեղծվի բուհական ուղղությունների ցանկը եւ բովանդակությունը մշակող աշխատանքային խումբ: Այդ նույն հրամանով արդեն հաստատված է նաեւ աշխատանքային խմբի կազմը: ArmLur.am-ը տեղեկացավ, որ աշխատանքային խմբի ղեկավարը մինչեւ 2022 թվականի նոյեմբերի 30-ը պետք է Զայաստանի Զանրապետության վարչապետին ներկայացնի բուհական համակարգի արդիականացման վերաբերյալ վերլուծական տեղեկանք՝ դրանում ներառելով. 1) նոր ձեւավորվող բուհերի ցանկի, դրանց ուղղությունների եւ բովանդակության վերաբերյալ առաջարկություն, 2) նոր ձեւավորվող բուհերի կողմից իրականացվելիք կրթական ծրագրերի վերաբերյալ առաջարկություն, այդ

թվում՝ ընթացիկ ծրագրերի հնարավոր միավորումների եւ նոր կրթական ծրագրերի ներդրման վերաբերյալ առաջարկություն, 3) նոր ձեւավորվող բուհերում ուսանողների կանխատեսվող քանակի վերաբերյալ տեղեկատվություն, այդ թվում՝ վիճակագրական տվյալներ՝ վերջին 10 տարիների ն տարեկան կտրվածքով բուհերից յուրաքանչյուրի (այդ թվում՝ մասնավոր) դիմորդների եւ շրջանավարտների վերաբերյալ, 4) ակադեմիական քաղաքում նոր ձեւավորվող բուհերի տեղակայման վերաբերյալ առաջարկություն, 5) համապատասխան բուհին միավորվող գիտահետազոտական ինստիտուտների եւ գործառնությունների վերաբերյալ տեղեկատվություն, 6) բուհական (ֆիզիկական, բովանդակային եւ իրավական ենթակառուցվածքը

սահմանող) ստանդարտների վերաբերյալ առաջարկություն, 7) սպայական ուսումնական հաստատության բովանդակության վերաբերյալ հայեցակարգ՝ նկատի ունենալով, որ «սպայական ակադեմիայի» հիմնական առաքելությունը պետք է լինի պետականակենտրոն սպա պատրաստելը: Աշխատանքային խմբի ղեկավարը 33 վարչապետի աշխատակազմի ղեկավար Արայիկ Զարուհյունյանն է, Զայաստանի Զանրապետության Ազգային ժողովի պատգամավոր, Գիտության, կրթության, մշակույթի, սփյուռքի, երիտասարդության եւ սպորտի հարցերի մշտական հանձնաժողովի նախագահ Սիսակ Գաբրիելյանը, հանձնաժողովի փոխնախագահը, փոխվարչապետ Զամբարձում Մաթեոսյանի օգնականը եւ այլք: ՆԱԽՈՎ ԶՈՎՅԱՆՆԻՍՅԱՆ

● Անցած 1 օրվա ընթացքում Զայաստանի Զանրապետությունում արձանագրվել է 8 ՃՏՊ. 10 մարդ ստացել է տարբեր աստիճանի մարմնական վնասվածքներ:

ՍՈՑԻԱԼԱԿԱՆ

ԼՈՒՐԵՐ

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Աճուրդի կազմակերպման եւ անցկացման մասին

2022թ. նոյեմբերի 25-ին՝ ժամը 15:00-ին, Յուրի Սելիպանովի սնանկության գործով կառավարիչ Վ. Էլոյանի կողմից ք. Երեւան, Արշակունյաց 5, 311 սենյակ հասցեում կանցկացվի Յուրի Սելիպանովին սեփականություն իրավունքով պատկանող հետևյալ գույքի աճուրդային վաճառք՝ բաց դասական եղանակով:

Գույքն իրենից ներկայացնում է՝ ԼՈՏ- 1. ՀՀ, ք. Երեւան, Կենտրոն համայնք, Չարենցի փող. 27ա շենքի բակում գտնվող ավտոտնակ /36.9 քմ./:

Մեկնարկային գինը սահմանվում է 3 751 791 ՀՀ դրամ:

Աճուրդին մասնակցելու համար պետք է ներկայացվեն՝

-ֆիզիկական անձի դեպքում՝ անձնագրի պատճենը, իսկ իրավաբանական անձի եւ Ա/Ձ-ի դեպքում՝ պետական գրանցումը հավաստող փաստաթղթերի պատճենը,

-աճուրդի ներկայացված լոտի մեկնարկային գնի 1% չափով մասնակցության վճարի վճարումը հավաստող փաստաթղթի պատճենը,

-աճուրդի ներկայացված լոտի մեկնարկային գնի 5%-ի չափով նախավճարի վճարումը հավաստող փաստաթղթի պատճենը:

Աճուրդի նախավճարը վճարվում է կանխիկ կամ փոխանցումով Յուրի Սելիպանովի սնանկության հատուկ հաշվին՝ «Արդշինբանկ» ՓԲԸ-ի «Էրեբունի» մասնաճյուղ՝ 2472304369220000 հաշվեհամարին, մինչեւ հայտ ներկայացնելու պահը:

Աճուրդին մասնակցել ցանկացողները սույն հայտարարությունից հետո՝ ընդհուպ մինչեւ աճուրդին նախորդող օրվա ժամը 16:00-ն, կարող են հայտ ներկայացնել Սնանկության դատարանի շենքում /ք. Երեւան, Օսյան 53/2/:

Աճուրդն անցկացվում է դասական եղանակով. հաղթող է համարվում առավել բարձր գին առաջարկած մասնակիցը:

Ցանկացողները կարող են լոտն ուսումնասիրել, ինչպես նաեւ աճուրդի կանոնակարգին ծանոթանալ՝ դիմելով կառավարիչ Վ. Էլոյանին /041 44 58 57 /:

ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ՀԵՐԹԱԳՐՈՒՄ

Նոյեմբերի 14-ից ՀՀ քաղաքացիություն ստանալու եւ դադարեցնելու դիմումների ներկայացումը, ՀՀ քաղաքացիություն ստացած անձի առաջին անգամ անձնագրավորումը, ինչպես նաեւ քաղաքացիություն ստանալու համար փաստաթղթերի նախնական ուսումնասիրությունն ու խորհրդատվության տրամադրումը իրականացվելու է Էլեկտրոնային հերթագրման եղանակով:

Նոյեմբերի 14-ից 18-ը Էլեկտրոնային հերթագրմանը զուգահեռ գործելու է նաեւ հերթագրման սարքավորումների միջոցով հերթագրման կտրոններով սպասարկելու ընթացակարգը (50 տոկոս հարաբերակցությամբ), իսկ նոյեմբերի 21-ից սպասարկումն իրականացվելու է բացառապես Էլեկտրոնային հերթագրման եղանակով:

ԴՐՈՒՅՔԱԶՎՓԻ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ

ԱՏԵՍՏԱՎՈՐՈՒՄ ԱՆՑԱԾ Է ՀԱՄԱՐՎԵԼ 60-69 %-Ը

ՀՀ կրթության, գիտության, մշակույթի եւ սպորտի նախարարի հրամանով հաստատվել են կամավոր ատեստավորման արդյունքում ատեստավորման արդյունքում 60-69 տոկոս արդյունք ցուցաբերած ուսուցիչները: Հաստատվել են կամավոր ատեստավորման արդյունքում դրույթաչափի փոփոխություն ունեցող եւ դրա նկատմամբ հավելավճար ստացող ուսուցիչների ցուցակները:

Համաձայն հրամանի՝ կամավոր ատեստավորում անցած են համարվել ատեստավորման արդյունքում 60-69 տոկոս արդյունք ցուցաբերած ուսուցիչները:

Հաստատվել են կամավոր ատեստավորման արդյունքում դրույթաչափի փոփոխություն ունեցող եւ փոփոխված դրույթաչափով հաշվարկվող աշխատավարձի նկատմամբ 5 տարի ժամկետով հավելավճար ստացող ուսուցիչների ցուցակները՝ ըստ ցուցաբերած արդյունքների՝

-70-79 տոկոս արդյունք ցուցաբերած ուսուցիչներին՝ 30 տոկոսի չափով,

- 80-89 տոկոս արդյունք ցուցաբերած ուսուցիչներին՝ 40 տոկոսի չափով,

-90-100 տոկոս արդյունք ցուցաբերած ուսուցիչներին՝ 50 տոկոսի չափով:

Ինչպես հայտնի է, ֆինանսական հատկացումներ ստանում են ատեստավորման 70 եւ ավելի տոկոսը հաղթահարած ուսուցիչները:

Սահմանվել է, որ դրույթաչափի փոփոխությունը եւ փոփոխված դրույթաչափով հաշվարկվող աշխատավարձի նկատմամբ կիրառվող հավելավճարները տրամադրվում են՝ սկսած 2022 թվականի հոկտեմբերի 1-ից:

Հիշեցնենք, որ, ըստ կամավոր ատեստավորման այս տարվա ծրագրի, գործընթացին կարող էր մասնակցել շուրջ 29 441 ուսուցիչ (5-12-րդ դասարանների բոլոր առարկայական ուսուցիչները): Սեպտեմբեր-հոկտեմբեր ամիսներին տեղի ունեցած կամավոր ատեստավորման հայտ էր ներկայացրել 3886 ուսուցիչ (շահառուների շուրջ 13 տոկոսը), որոնցից ատեստավորմանը մասնակցել է 2300-ը՝ գրանցվածների 60 տոկոսը: Նախորդ տարի հնարավոր շահառուների ընդհանուր թիվը 15 417 էր, որոնցից գրանցվել էր շուրջ 9 տոկոսը:



2022 թվականի արդյունքներով կամավոր ատեստավորման փուլը հաջողությամբ հաղթահարել է մասնակիցների 2/3-րդը՝ 66 տոկոսը, սակայն ֆինանսական ավելացումներ ստանալու է 1059 ուսուցիչ՝

- 30 %-ի չափով հավելավճար՝ 525 ուսուցիչ (մասնակիցների 23 %-ը),
- 40 %-ի չափով հավելավճար՝ 397 ուսուցիչ (մասնակիցների 17 %-ը),
- 50 %-ի չափով հավելավճար՝ 137 ուսուցիչ (մասնակիցների 6 %-ը):

Նշենք նաեւ, որ ատեստավորված ու հավելավճար ստացող մանկավարժների դրույթաչափն ավելի վաղ սահմանվել է 200 հազար ՀՀ դրամ, որի նկատմամբ կկիրառվի հավելավճարը:

2023 թվականից սկսած՝ ատեստավորման գործընթացն անցկացվելու է նաեւ 1-4-րդ դասարաններում դասավանդող բոլոր ուսուցիչների եւ դասավարդների համար:

Ա.Հ.

«ԱԿԲԱ» ԲԱՆԿ

«ԻՄՓԱՔԹ ՀԱԲ»-Ը՝ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՈՒՄ

Սառսափ գաղափարներին աջակցող միջազգային «Իմփաք Հաբ» ցանցի համալսարանային բարեգում հիմնադրամն կա Սյունիքի մարզը: Գործում «Իմփաք Հաբի» մասնաճյուղ է ստեղծվել, որ մարզում սոցիալական ձեռնարկությունն ավելի զարգանա: «Սյունիք Իմփաք Հաբը» բացվել է «Ակբա Ֆեդերացիայի» ու Եվրամիության համատեղ ֆինանսական աջակցությամբ:

Աշխարհի 65 երկրում գործող շուրջ 100 «Իմփաք Հաբերի» ցանցն ընդհանուր առմամբ 24000 անդամ ունի: Այժմ «Սյունիք Իմփաք Հաբում» ծնվող ու զարգացող բիզնես գաղափարների մասին կիմանան ամբողջ աշխարհում:

«Իմփաք Հաբի» երեւանյան մասնաճյուղին «Ակբա Ֆեդերացիան» աջակցում է արդեն մի քանի տարի. համայնքներում փոքր եւ միջին բիզնեսի զարգացմանը միտված բազմաթիվ գաղափարներ են կյանքի կոչվել այս ընթացքում: Սյունիքի մարզ «Իմփաք Հաբ» հարթակը տանելու գաղափարը «Ակբա Ֆեդերացիայի» առաջարկն էր:

«Մեզ համար շատ կարեւոր է, որ երիտասարդները չլքեն իրենց տարածքը, մնան իրենց գյուղում, շրջապատում եւ այդ շրջանում մնալով՝ զարգացնեն իրենց գաղափարները, ավելի ուժեղ դարձնեն իրենց համայնքը», - նշել է «Ակբա Ֆեդերացիայի» գլխավոր տնօրեն Յարույթյան Պողոսյանը:

«Այս ծրագիրը մեկ տարի առաջ ենք սկսել: Գործում ստարտափներին օգնելու եւ զարգացնելու հնարավորությունը մեզ ոգեւորեց: Շատ կարեւոր է, որ «Ակբա Ֆեդերացիան» նույնպես ֆինանսավորում է այս ծրագիրն ու օգնում լավագույն գաղափարներին», - նշել է Հայաստանում Եվրոպական միության պատվիրակության նախարար-խորհրդակցական, Համագործակցության բաժնի ղեկավար Ֆրանկ Հեսսը:

«Երբ մենք ծրագիրը սկսեցինք իրականացնել, հասկացանք, որ ուզում ենք երկարատեւ դարձնել այն՝ հենց այստեղ լինելով ու բացելով «Իմփաք Հաբ Սյունիքը»: «Ակբա Ֆեդերացիան» կանգնեց մեր կողքին եւ ասաց, որ պատրաստ է աջակցելու, որպեսզի «Իմփաք Հաբ Սյունիքը» բացվի եւ գործի», - նշել է «Իմփաք Հաբ Երեւանի» գործադիր տնօրեն Գեորգ Պողոսյանը:

Ոլորտային սահմանափակումներ «Սյունիք Իմփաք Հաբը» չունի, հարկ եղած դեպքում նոր գաղափարներ ունեցողները կապ կհաստատեն արդեն փորձառուների հետ, դասախոսություններ կլսեն ու կկարողանան ճիշտ կազմակերպել իրենց բիզնես ապագան: «Սյունիք Իմփաք Հաբը» կարող է լուրջ խթան դառնալ Սյունիքի մարզի երիտասարդների նախաձեռնությունները կենտրոնացնելու, առաջնորդելու եւ կյանքի կոչելու գործում:

«Ակբա Ֆեդերացիան» «Ակբա բանկ»-ի միակ նշանակալից մասնակիցն է, բանկի բաժնետոմսերում ունի շուրջ 83 տոկոս մասնաբաժին: «Ակբա» բանկում ունեցած մասնակցության շնորհիվ «Ակբա Ֆեդերացիան» նպաստում է Հայաստանի ողջ տարածքում գյուղատնտեսության, գյուղական շրջաններում փոքր եւ միջին բիզնեսի զարգացմանը, համայնքների զարգացմանը, գյուղական շրջաններում եւ համայնքներում բիզնես միջավայրի աշխուժացմանն ու զարգացմանը, նշված ոլորտներում ձեռնարկատիրական գործունեություն իրականացնող յուրաքանչյուր անձի բարեկեցության աճին:

«ժողովուրդ» օրաթերթում եւ Armlur.am կայքում գովազդ, հայտարարություն, հաշվետվություն, ծանուցում տեղադրելու համար զանգահարել 094-455-456 հեռախոսահամարով:

ԵՐԱԶԻ ԵՐԿԻՐ

ՄԻՐՈՒՄ ԵՆ՝ ԸԵՆԱՑՆԵԼՈՎ

«Հայրենիքը սիրում են՝ այն ճանաչելով, երկիրը սիրում են՝ այն ճանաչելով...»։ Ինչո՞ւ այս խոսքերով կյանքում առաջնորդվեց եւ հայրենիքին անձնուրաց նվիրվեց ու հերոսաբար զոհվեց ֆանսասիկ Գեորգ Արաւսյանը:

«Երազում եմ, որ մի օր հպարտորեն ասեմ՝ ես միացյալ ու անկախ Հայաստանի Հանրապետության քաղաքացի եմ, եւ իմ անձնագիրն ամենահզորը լինի աշխարհում: Ես իմ բոլոր գործերն այժմ փորձում եմ ծառայեցնել այս երազանքիս իրականացմանը»:

Գեորգն ընդամենը 24 տարեկան էր, բայց հասցրել էր միաժամանակ սովորել եւ կարմիր դիպլոմով ավարտել Երեւանի պետական համալսարանի փիլիսոփայության եւ հոգեբանության ֆակուլտետը, իրավաբանության ֆակուլտետը, Վազգեն Սարգսյանի անվան ռազմական համալսարանը: Աշխատում էր «Հայ ասպետ» դպրոցում որպէս ռազմագիտության ուսուցիչ:

Շատերը Գեորգին կհիշեն ինչպէս «Ամենախելացին» խաղից, որում տղան իր ողջույնի խոսքը եզրափակեց Գարեգին Նժդեհի խոսքերով. «Մահացիր այնպէս, որ մահդ էլ ծառայի հայրենիքիդ»:

Այս ֆենոմենալ մարդու անուն-ազգանունը դեռ շատ երկար կհնչի երիտասարդների շուրթերին, քանի որ նրա հիմնադրած «Գիտելիքի դպրոց»-ը ուղիղ շարունակությունը պետք է լինի նրա թողած գործի: Չնայած երիտասարդ տարիքին՝ Գեորգը կարողացավ ուրույն հետք եւ ժառանգություն թողնել գալիք սերունդին:

ArmLur.am-ը ներկա է գտնվել Եռաբլուրում Գեորգ Արշակյանի հիշատակի արարողությանը: Վերջինիս շիրիմին հարգանքի տուրք մատուցելու էին եկել բաճրաստիճան պետական այրեր, ուսանողներ եւ պարզապէս քաղաքացիներ:

Հիշեցնենք, որ «Մարտական խաչ» 1-ին աստիճանի շքանշանի ասպետ Գեորգ Արշակյանը գերազանց սովորել ու ավարտել է ԵՊՀ փիլիսոփայության եւ



հոգեբանության, ապա Իրավագիտության ֆակուլտետները, այնուհետեւ՝ ՄՆ Վազգեն Սարգսյանի անվան ռազմական համալսարանը: 2020 թ. օգոստոսին ավարտել է ժամկետային զինվորական ծառայությունը, որից հետո ընդունվել է ՄՊՀ սոցիոլոգիայի ֆակուլտետի

«Մարդկային ռեսուրսների կառավարում» բաժնի մագիստրատուրա, սակայն պատերազմի լուրը լսելուն պէս մեկնել է Արցախ: 2020 թ. նոյեմբերին Շուշիի մատույցներում վիրավորվել է եւ անմահացել:

ԼԻՂՎ ԵՐԻԿՁՈՒՅԱԼ

ԼՈՒՐԵՐ

ՄԱՐԶՉԱԿԱՆ ԵՇԱՆԱԿՈՒՄՆԵՐ

Բասկետբոլի Հայաստանի հավաքականներում տեղի են ունեցել մարզական նշանակումներ: 2023 թվականի ամռան անցկացվելիք Եվրոպայի C դիվիզիոնի առաջնությունում տղաների՝ Հայաստանի մինչեւ 18 տարեկանների հավաքականը կգլխավորի Արեգ Վաթյանը: Արեգ Վաթյանը փորձառու մասնագետ է: Նրա գլխավորությամբ Հայաստանի տարբեր տարիքային հավաքականներ բազմիցս ելույթ են ունեցել միջազգային մրցասպարեզում: 2017 թվականին գլխավորել է տղաների՝ Հայաստանի մինչեւ 16 տարեկանների հավաքականը, որը դարձել է Եվրոպայի C դիվիզիոնի չեմպիոն, իսկ 2022 թվականին նրա գլխավորությամբ աղջիկների Մ16 հավաքականը դարձել է Եվրոպայի C դիվիզիոնի փոխչեմպիոն: Հայաստանի մինչեւ 16 տարեկանների հավաքականի գլխավոր մարզիչի պաշտոնում աշխատանքը կշարունակի Զորիկ Իսաջանյանը: Նա երկար տարիների մարզական փորձ ունի: 2007-2009 եղել է «Ռաֆֆի» միության գլխավոր մարզիչը, 2010-2015թթ.՝ Գլենդել ըուլեջի օգնական մարզիչ: 2015 թվականից է Սերդինյան վարժարանի ընդհանուր մարզական պատասխանատուն է: 2022 թվականին նրա գլխավորությամբ տղաների Մ16 հավաքականը դարձել է Եվրոպայի C դիվիզիոնի փոխչեմպիոն:

ԼԱՎԱԳՈՒՅՆ ԳՈՒԸ

Երեւանի «Փյունիկ»-ի հարձակվող Յուսուֆ Օտուբանջոյի խփած գնդակը Բրատիսլավայի «Սլովակ»-ի դարպասը հավակնում է դառնալ Կոնֆեդերեցիաների լիգայի խմբային փուլի լավագույն գոլը: ՈւեֆԱ-ի կայքում քվեարկություն է սկսվել՝ որոշելու համար Կոնֆեդերեցիաների լիգայի խմբային փուլի լավագույն գոլը: Հրապարակված գոլերի թվում է նաեւ Օտուբանջոյի «Սլովակ»-ի դարպասն ուղարկած գնդակը: Յուսուֆ Օտուբանջոն «Սլովակ»-ի դարպասը գրավել է սեպտեմբերի 15-ին Երեւանում կայացած խաղում: Նա աչքի ընկավ խաղի 26-րդ րոպեին՝ հաշիվը դարձնելով 2-0:

2023 Թ.-Ի ԱՇԽԱՐՀԻ ԱՌԱՋՆՈՒԹՅՈՒՆ

Բռնցքամարտի 2023 թվականի աշխարհի առաջնությունը կանցկացվի Ուզբեկստանի մայրաքաղաք Տաշքենդում: Աշխարհի առաջնությունը կկայանա մայիսի 1-14-ը: Առաջնության մրցանակային ֆոնդը պատմական է: Առաջին տեղը զբաղեցրած բռնցքամարտիկը կստանա 200.000, երկրորդ տեղը՝ 100.000, երրորդ մրցանակակիրները՝ 50.000 ԱՄՆ դոլար: Մրցանակային ֆոնդն ընդհանուր առմամբ կազմում է 5,2 միլիոն ԱՄՆ դոլար: «Աշխարհի 2023 թվականի առաջնությունը կլինի լավագույնների մեկը պատմության մեջ, քանի որ առաջնության մրցանակային ֆոնդը կլինի ռեկորդային: Արդեն եղել են Տաշքենդում: Նրանք կարող են լավ օրինակ ծառայել աշխարհի մի շարք երկրների համար»,- ասել է բռնցքամարտի միջազգային ֆեդերացիայի նախագահ Ումար Կրեմլյովը: Բռնցքամարտի 2022 թվականի Եվրոպայի առաջնությունը կայացել էր Երեւանում:

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՀՐԱՊԱՐԱԿԱՅԻՆ ԾԱՆՈՒԹՅՈՒՆ  
«Բի Էս Թի» ՍՊԸ-ն (այսուհետ՝ Կազմակերպիչ) «Ալսոն» ԱՀ Բորսայի հարթակում իրականացնելու է բաց աճուրդ համապատասխան փուլերով՝ «դասական» (գնի բարձրացմամբ), այնուհետեւ «հոլանդական» (գնի նվազեցմամբ) եղանակներով: Աճուրդի ընթացքում վաճառվելու է «Հայքիզնեբանկ» ՓԲԸ-ին (այսուհետ՝ բանկ) գրավի իրավունքով պատկանող հետևյալ լոտը՝

- Տավուշի մարզ, համայնք Իջեան ք., Երիտասարդական փողոց, 14 շենք, 10 հասցեում գտնվող 77,7 ք.մ. բնակարան: Լոտի մեկնարկային գինը՝ 16150000 ՀՀ դրամ:

Լոտի նկատմամբ սահմանափակումներ՝ գույքը գրավարկված է:

Աճուրդի փուլերը՝ ք. Երեւան, Սայաթ-Նովա պողոտա, 40 շենք, թիվ 82/31 հասցեում 25.11.2022թ.-ին, ժ. 12:00-ին դասական եղանակով, այնուհետեւ յուրաքանչյուր աշխատանքային օր, նույն վայրում, նույն ժամին՝ հոլանդական եղանակով: Աճուրդի ավարտը՝ 30.12.2022թ.-ին:

Աճուրդի մասնակցության նախաձեռնող սահմանված է համապատասխան գույքի ընթացիկ մեկնարկային գնի 1%-ի չափով, որի վճարման վերջնաժամկետը սահմանված է յուրաքանչյուր աճուրդի փուլի օրվան նախորդող աշխատանքային օրվա ժամը 16:00-ն: Նախաձեռնող վճարվում է «Բի Էս Թի» ՍՊԸ -ի դրամարկումաճուրդի կայացման հասցեում, ՀՀ օրենսդրությամբ սահմանված կանխիկի շեմը չգերազանցելու դեպքում, կամ բանկային հաշվին («Արշիլբանկ» ՓԲԸ-ում 2470103374150000 հաշվեհամարին), կամ կազմակերպիչ կողմից տրված այլ հաշվեհամարին: Աճուրդին մասնակցելու համար անհրաժեշտ է ներկայացնել ֆիզիկական անձանց համար անձը հաստատող փաստաթուղթ եւ Կազմակերպիչ կողմից տրված մասնակցի վկայական (այսուհետ՝ աճուրդի վկայական), որը հաստատելու է նաեւ նախաձեռնողի մուծման փաստը, իսկ իրավաբանական անձանց համար՝ կանոնադրությունը, իրավաբանական անձանց պետական գրանցման վկայականը, պաշտոնատար անձի կամ ներկայացուցչի լիազորությունները հաստատող փաստաթուղթ եւ աճուրդի վկայական:

Աճուրդում հաղթող է ճանաչվում այն անձը, ով առաջարկել է ամենաբարձր գինը: Վերջին ամենաբարձր գնային հայտ ներկայացրած մասնակցը, աճուրդավարի մուծիկի երրորդ հարվածից հետո, համարվում է աճուրդում հաղթած մասնակից: Աճուրդին մասնակցած, սակայն չհաղթած անձի մուծած նախաձեռնող վերադարձվում է աճուրդի ավարտվելուց հետո մեկ աշխատանքային օրվա ընթացքում: Նախաձեռնողը ենթակա է վերադարձման, եթե աճուրդը համարվում է չկայացած: Եթե աճուրդում հաղթող ճանաչված անձը հրաժարվում է ստորագրել արձանագրությունը կամ առուվաճառքի պայմանագիրը, ապա նա կորցնում է իր մուծած նախաձեռնողը: Եթե Կազմակերպիչը հրաժարվում է ստորագրել արձանագրությունը, ապա նա պարտավորվում է աճուրդում հաղթած անձին վերադարձնել նախաձեռնողը:

Նախքան աճուրդի ավարտն աճուրդային լոտի նկատմամբ բանկի գրավի կամ սեփականության իրավունքի դադարման հետեւանքով աճուրդի մասնակցների կորուստների եւ վնասների համար բանկը որեւէ պատասխանատվություն չի կրում: Լոտն ուսումնասիրելու ցանկություն հայտնած անձինք կարող են սույն ծանուցման օրվան հաջորդող օրվանից մինչեւ աճուրդի ավարտը, յուրաքանչյուր աշխատանքային օր, ժ. 10:00-ից մինչեւ 18:00-ն, այցելել վերը նշված հասցեով եւ ծանոթանալ լոտի հետ՝ այցելությունը նախապէս համաձայնեցնելով Կազմակերպիչի հետ: Հարկային գործակալ հանդիսանալու դեպքում աճուրդում հաղթած մասնակցի կողմից լոտի գնի վճարելու կարգը սահմանվում է վաճառողի հետ՝ փոխհամաձայնեցված ժամկետներում: Սույն ծանուցումը կարող է փոփոխվել մասնավոր հրապարակվելու միջոցով: Աճուրդների անցկացման կանոնակարգին կարող էք ծանոթանալ եւ անվճար ստանալ կանոնակարգի պատճենը, դիմելով Կազմակերպիչին՝ ք. Երեւան, Սայաթ-Նովա պողոտա, 40 շենք, թիվ 82/31 հասցե: Բոլոր այլ տեղեկությունների համար կարող էք զանգահարել (011) 56-45-13 հեռախոսահամարով կամ այցելել [www.ilcbst.am](http://www.ilcbst.am), [www.akson.am](http://www.akson.am) կայքեր:

● Նոյեմբերի 10-ին Seven Visions, The Dvin Hotel-ում տեղի կունենա «Գենետիկ կող» համերգային փառատունը: Տոմսերի արժեքը՝ 15000-120000 դրամ: Սկիզբը՝ ժամը 20:00-ին:





Էջը՝ ՈՂՋԱ ՊՈՂՈՍՅԱՆԻ

ՏՆՏԵՍԱԿԱՆ

ՀԱՐՑ. Ի՞նչ է Էկոլոգիական տեղեկատվությունը: Մարատ Վարդանյան (22 տարեկան)



ՊԱՏԱՍԽԱՆ. Համաձայն «Շրջակա միջավայրի հարցերի առնչությամբ տեղեկատվության հասանելիության, որոշումներ ընդունելու գործընթացին հասարակայնության մասնակցության և արդարադատության մատչելիության մասին» կոնվենցիայի (Օրիուսի կոնվենցիա) «Էկոլոգիական տեղեկատվություն» նշանակում է ցանկացած տեղեկատվություն՝ գրավոր, տեսաձայնային, էլեկտրոնային կամ այլ նյութական ձևով, հետեյալի մասին.

ա/ շրջակա միջավայրի բաղադրիչների դրության մասին, որպիսիք են օդը և մթնոլորտը, ջուրը, բնահողը, հողը, լանդշաֆտը և բնական օբյեկտները, կենսաբանական բազմազանությունը և նրա բաղադրիչները՝ ներառյալ գենետիկորեն փոփոխված օրգանիզմները, և փոխազդեցությունը այս բաղադրիչների միջև,

բ/ այն գործոնների մասին, որպիսիք են նյութերը, էներգիան, աղմուկը և ճառագայթումը, ինչպես նաև այն գործոնները կամ միջոցները՝ ներառյալ վարչական միջոցները, շրջակա միջավայրի ոլորտի համաձայնագրերը, քաղաքականությունը, օրենսդրությունը, պլանները և ծրագրերը, որոնք ազդում են կամ ունակ են ազդել շրջակա միջավայրի տարրերի վրա, որոնք բերված են վերը՝ ա/ ենթակետում, և ծախսերի ու արդյունքների վերլուծությունը և այլ տնտեսական վերլուծություններ ու ենթադրություններ, որոնք օգտագործվել են շրջակա միջավայրի հետ կապված հարցերով որոշումների ընդունման ընթացքում,

գ/ մարդկանց առողջության և անվտանգության, մարդկանց կյանքի պայմանների, մշակույթի օբյեկտների և շենքերի ու շինությունների մասին՝ այնքանով, որքանով դրանք վրա ազդում է կամ կարող է ազդել շրջակա միջավայրի տարրերի վրա, կամ այս բաղադրիչներով միջնորդված ազդակները, գործունեությունը կամ միջոցները, որոնք հիշատակված են վերը՝ բ/ ենթակետում:

ՀՀ շրջակա միջավայրի նախարարություն

«ԺՈՂՈՎՈՒՐԳ». Շրջակա միջավայրի նախարարությունը (այդ թվում՝ նախարարության ենթակայությամբ գործող ՊՈԱԿ-ները) թափառող կենդանիների վնասագերծման որեւէ գործառույթ չի իրականացնում: Երեւանում թափառող կենդանիների վնասագերծման պատասխանատու կառույցը «Թափառող կենդանիների վնասագերծման կենտրոն» ՀՊԱԿ-ն է (թեժ գիծ՝ +374 11 514 539):

Մարզերում թափառող կենդանիներին վերաբերող հարցերով հարկ է դիմել տեղական ինքնակառավարման համապատասխան մարմին:

ՍՈՑԻԱԼԱԿԱՆ

ՀԱՐՑ. Մասնակի կենսաթոշակ նշանակելիս աշխատանքային ստաժում ո՞ր ժամանակաշրջաններն են հաշվառված:

Անժելա Դավթյան (52 տարեկան)



ՊԱՏԱՍԽԱՆ. Մասնակի կենսաթոշակ նշանակելիս աշխատանքային ստաժում հաշվառվում է միայն մինչև 2003թ. օգոստոս 1-ը ներառյալ մասնակի կենսաթոշակի իրավունք տվող պաշտոններում և մասնագիտություններով աշխատած ժամանակահատվածը:

Օրինակ՝ 55 տարեկան անձը դիմել է մասնակի կենսաթոշակ նշանակելու հարցով:

Նրա աշխատանքային գործունեությունը բաղկացած է հետևյալ ժամանակահատվածներից.

1966-1968թթ.՝ ժամկետային զինծառայող, 1968-1972թթ.՝ մանկավարժական ինստիտուտի ուսանող,

1972-1975թթ.՝ թանգարանում էքսկուրսավար, 1975-1978թթ.՝ ուսումնարանում վարպետ, 1978-2009թթ.՝ դպրոցում մանկավարժ:

Նրան մասնակի կենսաթոշակ կնշանակվի 1972-1975թթ. և 1978-2003թթ. աշխատանքային ստաժի (28 տարի) համար:

ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն

«ԺՈՂՈՎՈՒՐԳ». Մասնակի կենսաթոշակ նշանակելու համար անձը կարող է դիմել դրա իրավունքը ձեռք բերելուց հետո՝ ցանկացած ժամանակ՝ մինչև տարիքային աշխատանքային կենսաթոշակի իրավունք տվող տարիքը լրանալը:

ԼՈՒՐ ԿԱԴՐ

Լուսանկարը՝ համացանցից



«Եվրատեսիլ 2022» երգի հեղինակավոր մրցույթում Հայաստանի պատվիրակ Ռոզա Լինի Snap ստեղծագործությունը պլատինե երգի կարգավիճակ է ստացել. Snap երգը մրցույթի պատմության մեջ ամենալաված հինգ երգերից մեկն է դարձել:

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Մեր թերթը Բաժանորդագրվելու համար կարող եք դիմել



«Հայմամուլ» ՓԲԸ հեռ. 45-82-00, 45-19-11

«Հայփոստ» ՊՓԲԸ հեռ. 51-45-46, 51-45-47

«Բլից-Մեդիա» ՍՊԸ հեռ. 52-5301

Առաքումը՝ ԱՆՎՃԱՐ:

Ձեզ հետաքրքրող ցանկացած հարցով կարող եք դիմել «Ժողովուրդ» օրաթերթի խմբագրություն (010 54-64-23 հեռախոսահամարով), և մենք անպայման կանդրադարձանք ձեր բարձրացրած բոլոր խնդիրներին:

Subscription form with fields for name, address, phone, and contact info.



«Ժողովուրդ» օրաթերթում հրապարակված նյութերը արտատպելիս կամ ընթացիկ մեջբերումներ անելիս պետք է պարտադիր գրառել հետևյալ նախադասությունը. «Շարունակությունը կարող եք կարդալ «Ժողովուրդ» օրաթերթի այսօրվա համարում»:

Լրատվական գործունեություն իրականացնող՝ «Ժողովուրդ թերթի խմբագրություն» ՍՊԸ Հասցեն՝ ք. Երեւան, Աբովյան 22՝/3, հեռ.՝ 010 54-64-23 Պետական գրանցման վկայականի համարը՝ 03Ա089086 տրված է 24.11.2010 Ստորագրված է տպագրության 8.11.2022

Գլխավոր խմբագիր՝ ԶԵՆՈՒ ՄԱՆՈՒԿՅԱՆ

Տպագրված է «ԳԻՆՂ» տպարան ՍՊԸ հրատարակչությունում խմբագրություն հանձնված նյութերը չեն գրախոսվում և չեն վերադարձվում, Գ նշանով նյութերը գովազդային հրապարակումներ են, որոնց համար խմբագրությունը պատասխանատվություն չի կրում: